ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Ե Երևան, Չայլախյան 4 | Chaylakhyan str. 4,Yerevan

Հեռ. 57 63 37, | Tel. 57 63 37,

E-mail: info@atc.am

02.12.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 22-ին կազմակերպված «Ռուսաց լեզու», «Անգլերեն» և նոյեմբերի 23-ին կազմակերպված «ՆԶՊ», «Երաժշտություն», «Կենսաբանություն», «Ֆիզիկա» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովների նիստի որոշումների

2025թ. դեկտեմբերի 1-ին կայացավ «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Երաժշտություն», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», դեկտեմբերի 2-ին՝ «ՆԶՊ» առարկայի բողոքարկման հանձնաժողովների նիստը:

«Կենսաբանություն»առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Ֆիզիկա» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 34-րդ առաջադրանքում 10 Ջ/կգ է տպագրվել՝ 10Ջ/Կ փոխարեն: Բոլոր ատեստավորվողներին, որոնք միավոր չեն ստացել այդ առաջադրանքից, տալ մեկ միավոր: Մյուս առաջադրանքների արդյունքները մնում են անփոփոխ:

«Անգլերեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 32-րդ առաջադրանքում «20th century» բառակապակցության մեջ տեխնիկական վրիպակ է տեղի ունեցել, և «20th» թվի փոխարեն տպագրվել է «25th»: Այս առաջադրանքում ճիշտ պատասխաններ են 1, 7, 8 և նաև՝ 9: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան ընտրել են 1,7,8,9 պատասխաններից, տալ միավոր /մեկ միավոր յուրաքանչյուր պատասխանի համար/: Այն ատեստավորվողները, որոնք որպես ճիշտ պատասխան ընտրել են բոլոր 1,7,8,9 պատասխանները և միավոր չեն ստացել, տալ 3 միավոր՝ ստացած 0 միավորի փոխարեն: Մյուս առաջադրանքների բողոքարկման արդյունքում միավորները մնում են անփոփոխ:

«Երաժշտություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 7-րդ առաջադրանքը («Որ տողում նշված կոպմոզիտորներն են ստեղծագործել նաև ջազային ժանրում:») ունի երկու ճիշտ պատասխան՝ 2 և 4: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան նշել են 2 և միավոր չեն ստացել, տալ մեկ միավոր: Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են անփոփոխ:

«Ռուսերեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 12-րդ առաջադրանքում («В каком ряду не от всех прилагательных образуется простая сравнительная степень?») որպես ճիշտ պատասխան սահմանված 4-րդ տարբերակը վիճելի է: Այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին տալ միավոր, քանի որ առաջադրանքը չունի ճիշտ պատասխան:

Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են անփոփոխ:

«ՆԶՊ» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց.

1) նմուշային թեստի 45-րդ առաջադրանքը («Հաշվել մագնիսական ազիմուտը...») ունի երկու ճիշտ պատասխան՝ 28°24′ և 45°36′: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան նշել են 45°36′ և միավոր չեն ստացել, տալ մեկ միավոր:
2) Նմուշային թեստի 28-րդ առաջադրանքում («Որքան ժամանակ կարող է պահպանվել հողում սիբիրախտի հարուցիչը:») 2 ճիշտ պատասխան կա՝ «50 տարի» և «100 տարի»: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան նշել են «100 տարի» և միավոր չեն ստացել, տալ մեկ միավոր:

Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են անփոփոխ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ